**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2024 թվականի N 534

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1884 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էթերա Իմբերտի Մանուկյանի դիմումը, 22.01.2024 թ. ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին Կ-22012024-06-0023 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 04 դեկտեմբերի 2023 թվականի թիվ 1697 որոշումը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 18 դեկտեմբերի 2023 թվականի «Վանաձոր քաղաքի Գրիբոյեդովի փողոց թիվ 11 հասցեում գտնվող, Էթերա Իմբերտի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի ճշտված սահմանները հաստատելու և ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինություններն օրինականացնելու մասին» թիվ 1884 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման մեջ «90.6քմ ընդհանուր արտաքին (ներքին՝ 85.7քմ)» բառերը փոխարինել «98.55քմ ընդհանուր արտաքին (ներքին՝ 93.0քմ)» բառերով

2.Որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ « Էթերա Իմբերտի Մանուկյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 98.55քմ ընդհանուր արտաքին (ներքին՝ 93.0քմ) մակերեսով բնակելի նշանակության շինությունների համար՝ 194050 (հարյուր ինսունինչորս հազար հիսուն) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:»:

3. Էթերա Իմբերտի Մանուկյանին՝ ինքնակամ շինությունների օրինականացման համար սահմանված վճարի տարբերությունը՝ (194050-178400) 15650 (տասնհինգ հազար վեց հարյուր հիսուն) դրամ գումարը վճարել 900235401057 հաշվեհամարին»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 26
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2024 թվականի N 535

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 274 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արամ Էդիկի Ֆիդանյանի 16.02.2023թ. թիվ 02/3480 դիմումը, 15.02.2024թ. ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին Կ-15022024-06-0154 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 06 փետրվարի 2024 թվականի թիվ 274 որոշումը, «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի նոր հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին», ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 06 փետրվարի 2024 թվականի «Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով) թաղամաս 7-րդ փողոց, թիվ 7 հասցեում գտնվող բնակելի տանը կից հողամասի ադրա վրա գտնվող շինությունների նկատմամբ Արամ Էդիկի Ֆիդանյանի սեփականության իրավունքը ճանաչելու մասին» թիվ 274 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1.Որոշման վերնագիրը «նախկին Ժդանով» բառերը փոխարինել «նախկին Ժդանով թաղամաս 12կվ. թիվ 9» բառերով, «ճանաչելու» բառից հետո լրացնել «և փոստային հասցե տրամադրելու ու Վանաձորի քաղաքապետի 17.03.2008թ. թիվ 338 որոշումը ուժը կորցրած ճանաչելու» բառերով:

2.Որոշման նախաբանում, 1-ին կետում և 2-րդ կետում «Տավրոս (նախկին Ժդանով) 7-րդ փողոց թիվ 7» բառերը փոխարինել «Տավրոս (նախկին Ժդանով թաղամաս 12կվ. թիվ 9) թաղամաս 7-րդ փողոց թիվ 7» բառերով:

3.Որոշման նախաբանում «540.0քմ և կից 0.7քմ» փոխարինել «540.0քմ և կից 32.9քմ» բառերով, «540.7քմ» բառերը փոխարինել «572.9քմ» բառերով,որոշման 1-ին կետում «540.0քմ մակերեսով հողամասին կից 0.7քմ» բառերը փոխարինել «540.0քմ մակերեսով հողամասին կից 32.9քմ»բառերով,որոշման 2-րդ կետում «540.7քմ» բառերը փոխարինել «572.9քմ» բառերով,««Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով» բառերից հետո լրացնել ««Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով,ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով» բառերով:

4.Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տավրոս (նախկին Ժդանով թաղամաս 12կվ. թիվ 9)

թաղամաս 7-րդ փողոց թիվ 7 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տավրոս թաղամաս 7-րդ փողոց թիվ 7 բնակելի տուն:

5.Որոշմանը ավելացնել նոր 4-րդ կետ հետևյալ նոր բովանդակությամբ.

«4.Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքապետի 17 մարտի 2008 թվականի «Վանաձոր քաղաքի Տավրոսի 7-րդ փողոցի թիվ 7 հասցեում գտնվող հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու, Էդիկ և Բավական Ֆիդանյաններին հողամաս վերահատկացնելու մասին» թիվ 338 որոշումը:»:

6.Վանաձոր համայնքի ղեկավարի 06 փետրվարի 20243 թվականի թիվ 274 որոշման հատակագիծը փոխարինել Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հատակագծով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 26
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2024 թվականի N 536

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ 1 ՓՈՂՈՑ 3 ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐԴԱՆ ԳՈՒՐԳԵՆԻ ՎԱՆԵՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարդան Գուրգենի Վանեսյանի (ծնված՝ 24.07.1960թ.) 11.12.2023թ. թիվ 02/22010 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1718615 վկայականը, 06.02.2024թ «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ ՎՆ 1- 56/24 Ի եզրակացությունը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, 01.12.2023թ. ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023N9VJBS), ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով, 18-րդ կետի ա) ենթակետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում 1 փողոց 3 նրբանցք թիվ 9 հասցեում գտնվող, Վարդան Գուրգենի Վանեսյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան զբաղեցրած 0,117438հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Ճանաչել օրինական Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում 1 փողոց 3 նրբանցք թիվ 9 հասցեում գտնվող, Վարդան Գուրգենի Վանեսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 131.94քմ ընդհանուր արտաքին (ներքին մակերեսը՝ 112.74քմ) մակերեսով բնակելի նշանակության շինությունները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

3. Վարդան Գուրգենի Վանեյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 131.94քմ ընդհանուր արտաքին (ներքին մակերեսը՝ 112.74քմ) մակերեսով բնակելի նշանակության շինությունների համար՝ 187620 (հարյուր ութսունյոթ հազար վեց հարյուր քսան) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 26
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2024 թվականի N 537

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 3/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՏԱՂԱՎԱՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՅՈՒԶԱՆՆԱ ԱՐՏԱԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սյուզաննա Արտակի Գրիգորյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12022024-06-0061 և Սյուզաննա Արտակի Գրիգորյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01122022-06-0010 վկայականները, 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 47 որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, 12.04.2022թ. «ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ընդունած ՀՕ 93-Ն ՀՀ օրենքով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Վ.Համարձումյան փողոց 3/11 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 5.85քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12022024-06-0061 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 25990 (քսանհինգ հազար ինը հարյուր իննսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով, սեփականության իրավունքով օտարել Սյուզաննա Արտակի Գրիգորյանին՝ տաղավարի ընդլայնման նպատակով:

2.Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Սյուզաննա Արտակի Գրիգորյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 5.85քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ համայնքի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 26
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2024 թվականի N 538

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՆՁՈՐՈՒՏ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԱՐՏԱԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՂԱԶԱԽԵՑՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սպարտակ Անդրանիկի Ղազախեցյանի (ծնված՝ 18.06.1957թ.) 09.08.2023թ. թիվ 02/13471 դիմումը, փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, 23.08.2023թ. տրված թիվ 4624 (նոտարական ակտի կոդ: 843-20230823-66-7230749), 23.08.2023թ. տրված թիվ 4623 (նոտարական ակտի կոդ: 843-20230823-66-7227990) և 25.08.2023թ. տրված թիվ 4744 (նոտարական ակտի կոդ: 843-20250823-66-7235914) հայտարարությունները, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, 17.08.2023թ ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023N4WCF2), 22.12.2023թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված թիվ ՎՆ 1- 484/23 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման /138465/ քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամաս 2-րդ փողոց 8 (պայմանական) հասցեում կառուցած բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 399.9քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1990-1996թթ. և դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 399.9քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1990թ.-ից:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Սպարտակ Անդրանիկի Ղազախեցյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամաս 2-րդ փողոց թիվ 8 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 399.9քմ

մակերեսով հողամասի ու դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ, բացառությամբ 1996թ. կառուցված 36.24քմ. ներքին մակերեսով անավարտ բնակելի տան:

2.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3.Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Խնձորուտ թաղամաս 2-րդ փողոց թիվ 8 (պայմանական) հասցեում կառուցած բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Խնձորուտ թաղամասի 2-րդ փողոց, 3-րդ փակուղի, 13/2 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 26
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2024 թվականի N 539

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 14 ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտակ Ռաֆիկի Ադամյանի 21.12.2022թ. թիվ 17802 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, Արսեն Իսահակյան Ռուդիկի ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 01.02.2024թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-22/24 ա եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 25.12.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր: 2023ZH2RND), 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոց թիվ 14 շենքի հարևանությամբ ինքնակամ կառուցված,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 23.22քմ մակերեսով (ներքին մակերես՝ 21.81քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 23.22քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոց թիվ 14 շենքի հարևանությամբ գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Հ. Ներսիսյան փողոց, 14/23 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 26
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 փետրվարի 2024 թվականի N 540

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Տ. ՉՈՒԽԱՃՅԱՆ ՓՈՂՈՑ 5/17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՄԱՆ ՊԵՏՐՈՍԻ ԱՍԼԻԿՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արման Պետրոսի Ասլիկյանի 16.02.2023թ. թիվ 2436 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15022024-06-0024 վկայականը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր քաղաքի Տ. Չուխաջյան փողոց 5/17 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 43.54քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 41.7քմ) ավտոտնակը 85740 (ութսունհինգ հազար յոթ հարյուր քառասուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 58.1քմ մակերեսով հողամասը 258070 (երկու հարյուր հիսունութ հազար յոթանասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արման Պետրոսի Ասլիկյանին:

2.Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Արման Պետրոսի Ասլիկյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 26
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2024 թվականի N 541

## ԱԼԼԵՆ ԼՅՈՎԱՅԻ ՔԱՌՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ ԼՄ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժնի կողմից կազմված արձանագրության և զեկուցագրի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով 13 նոյեմբերի 2023 թվականին հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Ըստ ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժնի կողմից կազմված արձանագրության և զեկուցագրի, Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտայի 30/3 բնակիչ, 1980 թվականին ծնված՝ Ալլեն Լյովայի Քառյանը Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի պողոտայի 59 շենքի դիմացի տարածքում առանց թույլտվության ոչ սահմանված վայրում իրականացնում է բացօթյա առևտուր (խաղալիքներ և կենցաղային իրեր):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի բ կետի հիմքով 13 նոյեմբերի 2023 թվականին հարուցվել է վարչական վարույթ, որի հիման վրա 13 նոյեմբերի 2024 թվականին հրավիրվել է վարչական վարույթի լսումներ որին չի ներկայացել Ալլեն Քառյանը: Ըստ ծանուցման փոստային հետադարձ կտրոնի Ալլեն Քառյանը ծանուցվել է 16 դեկտեմբերի 2023 թվականին: 07 փետրվարի 2024 թվականին կրկին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին նույնպես չի ներկայացել քաղաքացի Ալլեն Քառյանը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական

վարույթը, եթե՝ վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը, հետևաբար 18 հունվարի 2024 թվականին թիվ 117 որոշմամբ վարչական վարույթը կասեցվել է: Համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենքի 283-րդ հոդվածի քաղաքացի Ալեն Քառյանը 06 փետրվարի 2024 թվականին ծանուցվել է ՀՀ ինտերնետով ծանուցման պաշտոնական վեբ կայք՝ https://vanadzor.am միջոցով, էլ.փոստ՝ citivanadzor@mail.ru և վարչական վարույթի լսումների օր է նշանակվել 2024 թվականի փետրվարի 13-ին, սակայն Ա.Քառյանը կրկին չի ներկայացել:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16. հոդվածի 3-րդ մասի համաձայն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև յոթանասունապատիկի չափով՝ առևտրի ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:Սույն մասով նախատեսված խախտումը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի իննսունապատիկից մինչև հարյուրտասնապատիկի չափով՝ առևտրի ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 169.16 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ

գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 162-րդ, 219[1]-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 14-րդ մասով

ՈՐՈՇԵՑԻ

1.Ալլեն Լևոնի Քառյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

2.Ալլեն Քառյանին տուգանքի գումարը վճարել Վանաձորի ՏԳԲ 900235401537 հաշվարկային հաշվին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

4.Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

7.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 26
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2024 թվականի N 542

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ 7/51 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՏԱԿ ՍՈՍԻԿԻ ՏԻԳՐԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտակ Սոսիկի Տիգրանյանի 02.06.2022թ. թիվ 4971 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 31012024-06-0046 վկայականը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Գ. Նժդեհի փողոց 7/51 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 25.28քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 19.4քմ) ավտոտնակը 95340 (իննսունհինգ հազար երեք հարյուր քառասուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 28.3քմ մակերեսով հողամասը 704350 (յոթ հարյուր չորս հազար երեք հարյուր հիսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արտակ Սոսիկի Տիգրանյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Արտակ Սոսիկի Տիգրանյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 26
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 փետրվարի 2024 թվականի  N 543

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ս.ԼԱԶՅԱՆ ՓՈՂՈՑ 43/30 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՓԻՆԵ ԱՐՏԱՇԵՍԻ ՎԻՐԱԲՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արփինե Արտաշեսի Վիրաբյանի 02.06.2022թ. թիվ 4962 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 31012024-06-0029 վկայականը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ս. Լազյան փողոց 43/30 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 25.4քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 24.4քմ) ավտոտնակը 95790 (իննսունհինգ հազար յոթ հարյուր իննսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 25.4քմ մակերեսով հողամասը 632180 (վեց հարյուր երեսուներկու հազար հարյուր ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արփինե Արտաշեսի Վիրաբյանին:

2.Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Արփինե Արտաշեսի Վիրաբյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ                    Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 26
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2024 թվականի N 544

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջները, համաձայն Վանաձորի համայնքի 2023թ նոյեմբերի 29-ի ավագանու 53 որոշման, Վանաձոր համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարումն ապահովելու նպատակով **որոշում եմ՝**

Հաստատել Վանաձոր համայնքի մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման մշտական հանձնաժողովի կազմը.

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման մշտական հանձնաժողով /այսուհետ' հանձնաժողով/' համաձայն հավելված 1-ի:

2. Սահմանել հանձնաժողովի իրավասությունները' համաձայն հավելված 2-ի:

3. Սահմանել մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ընթացակարգերն ու չափանիշները' համաձայն հավելված 3-ի:

4. Սահմանել առաջարկների ներկայացման հայտի, նախնական գնահատման աղյուսակի և միջոցառումների պլան-ժամանակացույցի ձևաթղթերը' համաձայն հավելված 4-ի, 5-ի և 6-ի:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2024 թվականի N 545

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 4/29 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԵՐԱ ՂՈՒՐԲԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վերա Ղուրբանի Գևորգյանի 28.09.2022 թվականի թիվ 11910 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 31012024-06-0025 վկայականը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Հ. Թումանյան փողոց 4/29 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 30.64քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 26.24քմ) ավտոտնակը 98240 (իննսունութ հազար երկու հարյուր քառասուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 27.28քմ մակերեսով հողամասը 441300 (չորս հարյուր քառասունմեկ հազար երեք հարյուր) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Վերա Ղուրբանի Գևորգյանին:

2. Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Վերա Ղուրբանի Գևորգյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2024 թվականի N 546

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 17 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼՈՒԾԱՐՎԱԾ «ՄԱԼԱՆՉ» ԲԲԸ-Ի ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԱԾ ԵՎ ԱՅԴ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Եվրոպայի խորհրդի մասնակից պետություններում իրավունքի գերակայության գնահատման չափանիշ է դիտարկում իրավական որոշակիությունը, որի դրսևորումներից է res judicata սկզբունքը հարգելը, ըստ որի՝ ներպետական դատարանների վերջնական դատական ակտերը չպետք է կասկածի տակ դրվեն"

-Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի կողմից թիվ ՀՅՔԴ/0322/04/08 քաղաքացիական գործով 03.11.2009 թվականին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռի համաձայն՝ վճռվել է լուծարման գործընթացում գտնվող «Մալանչ» ԲԲԸ-ի սնանկության գործն ավարտել և «Մալանչ» ԲԲԸ-ն լուծարել, այդ վճռով հաստատված է համարվել, որ թեև «Մալանչ»ԲԲԸ-ի բոլոր պարտատերերի պահանջները չեն բավարարվել, սակայն «Մալանչ» ԲԲԸ-ն այլևս չունի գույք, որի վրա կարելի է բռնագանձում տարածել, իսկ այդ վերջնական դատական ակտը չի կարող կասկածի տակ դրվել,

-«Մալանչ» ԲԲԸ-ի լուծարումը իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 30.12.2009թվականին,

-ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 166-րդ հոդված 1-ին մասի համաձայն՝ սեփականության իրավունքի սուբյեկտներն են քաղաքացիները, իրավաբանականան ձինք, Հայաստանի Հանրապետությունը և համայնքները,

-ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձի իրավունակությունը քաղաքացիական իրավունքներ ունենալու և իր գործունեության հետ կապված պարտականություններ կրելու ունակությունն է,

-ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի իրավունակությունը դադարում է լուծարման ավարտի պահից,

- ՀՀ հողային օրենսգրքի 100-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հողամասի նկատմամբ իրավաբանական անձի սեփականության իրավունքը դադարում է իրավաբանական անձի լուծարման դեպքում,

- ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համայնքների սեփականությանն են պատկանում տվյալ համայնքի սահմանագծի ներսում գտնվող հողերը,

բացառությամբ պետությանը, քաղաքացիներին, իրավաբանական անձանց և սեփականության այլ սուբյեկտներին պատկանող հողերի,

- «Մալանչ» ԲԲԸ-ին 10.04.2006թ. տրված թիվ 2012088 սեփականության իրավունքի վկայականում նշված՝ Լոռու մարզ, քաղաք Վանաձոր Շիրակացու փողոց թիվ 17 հասցեի հողամասը դեռևս գրանցված է որպես «Մալանչ» ԲԲԸ-ի սեփականություն, մինչդեռ «Մալանչ»ԲԲԸ-ի լուծարման ավարտի պահից՝ 30.12.2009 թվականից, վերջինս դադարել է սեփականության իրավունքի սուբյեկտ համարվելուց և նշված հողամասի նկատմամբ նրա սեփականության իրավունքը օրենքի ուժով 30.12.2009 թվականից համարվում է դադարեցված, նույն պահից այն օրենքի ուժով՝ ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով համարվում է Վանաձոր համայնքի սեփականությունը,

- «Մալանչ» ԲԲԸ-ին 10.04.2006թ. տրված թիվ 2012088 սեփականության իրավունքի վկայականում նշված՝ Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, Շիրակացու փողոց թիվ 17 հասցեի հողամասը ըստ 2014թվականին հաստատված Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի հանդիսանում է Վանաձոր համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամաս (նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության):

Հիմք ընդունելով 100-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 56-րդ հոդվածի 1-ին, 5-րդ և 7-րդ մասերով, օրենքի ուժով Վանաձոր համայնքի սեփականության ներքո գտնվող Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, Շիրակացու փողոց, թիվ 17 հասցեի հողամասը կառավարելու և տնօրինելու լիազորությունների պատշաճ իրականացումն ապահովելու նպատակով՝

**Որոշում եմ**

1.«Մալանչ» ԲԲԸ-ի լուծարման պահից՝ 30.12.2009 թվականից համարել դադարեցված «Մալանչ» ԲԲԸ-ի սեփականության իրավունքը 10.04.2006թ. տրված թիվ 2012088 սեփականության իրավունքի վկայականում նշված՝ Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, Շիրակացու փողոց թիվ 17 հասցեի հողամասի նկատմամբ՝ 30.12.2009թվականից այն համարելով Վանաձոր համայնքի սեփականությունը:

2.Սահմանել, որ 10.04.2006թ. տրված թիվ 2012088 սեփականության իրավունքի վկայականում նշված Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, Շիրակացու փողոց թիվ 17 հասցեի հողամասի վրա առկա՝ սնանկության վարույթումվաճառված «Մալանչ» ԲԲԸ-ին նախկինում պատկանող շինությունների նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքի ծագման իրավական հիմք է հանդիսանում նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 6-րդ մասը՝ այդ շինությունների զբաղեցրած հողամասերը սեփականության իրավունքով տրամադրման կամ սեփականության իրավունքի ճանաչման մասին համայնքի ղեկավարի որոշման առկայության դեպքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2024 թվականի N 547

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-084-0102-0038) ԳՏՆՎՈՂ ԲՈՐԻՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ԵՍԱՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Բորիս Համբարձումի Եսայանի լիազորված անձ Գոհար Սարգսի Մարտիրոսյանի (ծնված՝ 27.10.1958թ.) 29.11.2023թ. թիվ 02/21051 դիմումը, 09.11.2023թ. տրված թիվ 77 ԱԴ 1998410 (նոտարական ակտի կոդ: 741-20231121-67-7487316) լիազորագրի ռուսերենից հայերեն թարգմանությունը, 25.04.1991թ. Լոռու մարզի Շահումյան համայնքում հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի թիվ 08 որոշումը, 13.02.2024թ. տրված հողհատկացման քաղվածքը և ցուցակը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման /142870/ քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 16-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Հաստատել Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում (ծածկագիր: 06-084-0102-0038) գտնվող զբաղեցրած 0.152188հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2.Վերականգնել Բորիս Համբարձումի Եսայանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում (ծածկագիր: 06-084-0102-0038) գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0.152188հա մակերեսով հողամասի հողհատկացման հիմքերը՝ համաձայն «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագծի:

3.Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում (ծածկագիր: 06-084-0102-0038) գտնվող հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Շահումյան, 5-րդ փողոց, 29 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2024 թվականի N 548

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 12-1/11 ՀԱՍՑԵԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սերինե Գեորգիի Մկրտումյանի դիմումը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 01.02.2024թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-40/24 Ի եզրակացությունը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 07.04.2023թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023T4RSSP), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 2021թ. ապրիլի 15-ի թիվ 600-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Փոխել Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 12-1/11 հասցեի արևելյան մասում ինքնակամ կառուցված 0.1քմ մակերեսով շինության օգտագործման նպատակը հասարակական շինությունից որպես արտադրական պահեստի:

2.Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 12-1/11 հասցեի արևելյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 0.1քմ մակերեսով շինության և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0.2քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

3.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված արտադրական գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված շինության և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին շինությունն և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6.Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 12-1/11 հասցեի արևելյան մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, ք. Վանաձոր, Վարդանանց փողոց, 12/5 պահեստ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2024 թվականի N 549

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1.ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման բաժնի պետի (2.1-12) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2024 թվականի մարտի 28 -ին անցկացնել մրցույթ:

2.ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետի (2.1-4) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2024 թվականի մարտի 28 -ին անցկացնել մրցույթ:

3.ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության, բարեկարգման և բնապահպանության բաժնի պետի (2.1-8) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2024 թվականի մարտի 28 -ին անցկացնել մրցույթ:

4. ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի (2.1-11) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2024 թվականի մարտի 28-ին անցկացնել մրցույթ:

5.ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնի պետի (2.1-10) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2024 թվականի մարտի 28-ին անցկացնել մրցույթ:

6.Մրցույթների անցկացման մասին հայտարարությունը հրապարակել http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

7.Սույն որոշման մասին երկօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմին:

8. Հաստատել մրցույթների հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

9.Լիազորված անձ նշանակել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հ. Վիրաբյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2024 թվականի N 550

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ 10/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԿ ՎԱՆԵՍԻ ՅԱՁԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայկ Վանեսի Յազլյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 27122023-06-0063 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ ***որոշում եմ.***

Փոխել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Շինարարների փողոց 10/1 հասցեում գտնվող 0.016հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2024 թվականի N 551

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱԹԵՎԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 12Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՐԵՏԱ ԳԵՐԱՍԻՄԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գրետա Գերասիմի Մխիթարյանի (ծնված՝ 13.07.1950թ.) լիազորված անձ Էմիլյա Անուշավանի Բարսեղյանի դիմումը, 25.09.2023թ. տրված թիվ 61ԱԱ9524876 լիազորագրի ռուսերենից հայերեն թիվ 5682 թարգմանությունը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 22.05.1987թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 06.10.2015թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 7405 վկայագիրը, 14.02.2024թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-71/24 ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, մասնագիտական եզրակացությունը, 31.12.2023թ. ՀՀ կադաստրի կոմիտեի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023K3UNAD) և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Տաթևի փողոց թիվ 12ա հասցեում գտնվող բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 298.77քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1959-1987թ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 298.77քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1959թ.-ից:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-ին ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Գրետա Գերասիմի Մխիթարյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տաթևի փողոց թիվ 12ա հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ

298.77քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Վանաձոր քաղաքի Տաթևի փողոց թիվ 12ա գտնվող բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տաթևի փողոց, 12/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2024 թվականի N 552

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ 10-ՐԴ ՓՈՂՈՑ 18 Ա ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱԿՈԲ ՄԻՇԱՅԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԳՈՒԳԱՐՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ 13.04.2011 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 50 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հակոբ Միշայի Կարապետյանի (ծնված՝28.11.1961թ.) լիազորված Արամ Նորիկի Հարությունյանի կողմից վերալիազորված անձ Ծովիկ Նորիկի Հարությունյանի 13.12.2023 թվականի թիվ 02/22214 դիմումը, 15.06.2023 թվականի թիվ 4562 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 763-20230706-67-7080245), թիվ 50 АБ9625135 լիազորագրի ռուսերենից հայերեն թիվ 4562 թարգմանությունը, 18.12.2023 թվականի <<Նոտարական տարածքի>> նոտար Ռոզա Բեկչյանի թիվ 1403 գրությունը, 07.03.1986 թվականի թիվ 218 տեխնիկական անձնագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Գասպար Վեքիլյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն,որ Վանաձոր համայնք գյուղ Գուգարք 10-րդ փողոց 18ա հասցեի բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1000.0 քմ մակերեսով հողամասին կից 40.8 քմ մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը և շինությունները կառուցվել է 1989-1991թթ բնակելի տան կառուցման ու սպասարկման հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1040.8 քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Հակոբ Միշայի Կարապետյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնք գյուղ Գուգարք 10-րդ փողոց 18ա հասցեում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 1000.0 քմ մակերեսով հողամասին կից 40.8 քմ մակերեսով հողամասի և դրա վրա

գտնվող շինությունների նկատմամբ ըստ շինությունների բնութագրի:Հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1040.8 քմ:

2.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3.Վանաձոր համայնք գյուղ Գուգարք 10-րդ փողոց 18ա հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք 10-րդ փողոց, 18/1 բնակելի տուն:

4.Ուժը կորցրած ճանաչել Գուգարքի գյուղապետի Գուգարք համայնքի 067-001 ծածկագրի տնատիրության ճշտված սահմանները հաստատելու, հողհատկացման հիմքերը վերականգնելու, մինչև 15.05.2001թ. ինքնակամ զբաղեցրած հողամասի նկատմամբ Հակոբ Կարապետյանի սեփականության իրավունքը ճանաչելու, ինքնակամ կառուցված օժանդակ շինություններն օրինականացնելու և նշված անշարժ գույքին նոր փոստային հասցե տրամադրելու մասին 13.04.2011 թվականի թիվ 50 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2024 թվականի N 553

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔՈՒՄ /06-031-0302-0035/ ԳՏՆՎՈՂ ՆԱՐԻՆԵ ՇԱՎԱՐՇԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարինե Շավարշի Սարգսյանի 25.10.2023 թվականի թիվ 02/18543 դիմումը, 14.03.1996 թվականի տրված հողի սեփականության իրավունքի ժամանակավոր վկայականը, 04.07.1998թ. հողի սեփականության իրավունքի թիվ 203960 պետական ակտը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Տարոն Սերոբյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 16-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

1.Հաստատել Վանաձոր համայնքի գյուղ Գուգարքում /ծածկագիր: 06-031-0302-0035/ գտնվող զբաղեցրած 0.05038 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2.Վերականգնել Նարինե Շավարշի Սարգսյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի գյուղ Գուգարքում /ծածկագիր: 06-031-0302-0035/ գտնվող ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0.05038 հա մակերեսով հողամասի հողհատկացման հիմքերը՝ համաձայն «Տարոն Սերոբյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագծի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 27
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2024 թվականի N 554

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ՄԵՔԵՆԱՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ԹԱՂԱՄԱՍ, 41/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԱՆՑՈՎԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԽԱՆՈՒԹԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սվետլանա Վարանցովի Ալավերդյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03012024-06-0076 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 և ՀՀ կառավարության 2021թ. ապրիլի 15-ի թիվ 600-Ն որոշումներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տարոն-4 Մեքենաշինարարների թաղամաս, 41/2 հասցեի 52.92քմ մակերեսով խանութի երկրորդ հարկի օգտագործման նպատակը փոխել բնակելի տան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2024 թվականի N 555

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 18 ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գեննադի Ալեքսեյի Գյուրջյանի կողմից լիազորված անձ՝ Լուսինե Մագթաղյանի 03.10.2022թ. թիվ 12172 դիմումը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը/59463/, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 24.07.2023թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-50/23 ա եզրակացությունը, Արսեն Իսահակյան Ռուդիկի ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 03.10.2022 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022BPLUUF), 22.09.2022 թվականի թիվ 2931 լիազորագիրը (նոտարական ակտի կոդ: 765-20220922-90-6286599), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով,ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոց, 1-ին նրբանցք, թիվ 18 շենքի բակում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 29.22քմ արտաքին (ներքին՝ 27.07քմ) մակերեսով ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 29.22քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5.Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոց, 1-ին նրբանցք թիվ 18 շենքի բակում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Հ Ներսիսյան փողոց, 1-ին նրբանցք, 18/13 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2024 թվականի N 556

## ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 12-1/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍԵՐԻՆԵ ԳԵՈՐԳԻԻ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սերինե Գեորգիի Մկրտումյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11122019-06-0089 վկայականը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 01.02.2024թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-40/24 Ի եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 07.04.2023թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023ZSG4HU), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 2021թ. ապրիլի 15-ի թիվ 600-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 11-րդ, 17-րդ կետերով և 18-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Փոխել Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 12-1/11 հասցեում գտնվող, Սերինե Գեորգիի Մկրտումյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված 92.45քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 81.9քմ) շինության օգտագործման նպատակը հասարակական մարզասրահից որպես արտադրական պահեստի:

2.Ճանաչել օրինական Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 12-1/11 հասցեում գտնվող, Սերինե Գեորգիի Մկրտումյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 92.45քմ

ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 81.9քմ) պահեստը՝ համաձայն հատակագծի:

3.Սերինե Գեորգիի Մկրտումյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 92.45քմ արտաքին մակերեսով շինության համար 273060 (երկու հարյուր յոթանասուներեք հազար վաթսուն) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

4.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Վարդանանց փողոց, 12/1 պահեստ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2024 թվականի N 557

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 22 ՀՈՒՆՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 128 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 22 հունվարի 2024 թվականի թիվ 128 որոշումը,ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 22 հունվարի 2024 թվականի «Վանաձոր համայնքի ղեկավարի 24 փետրվարի 2023 թվականի թիվ 409 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 128 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1. Որոշման 2-րդ կետը «կառուցապատման գոտում» բառերից հետո լրացնել «ևՎանաձոր համայնքի ղեկավարի 24.02.2023թ. թիվ 409 որոշման մեջ գրվել է սխալմամբ» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ                Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 27
ք.Վանաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2024 թվականի N 558

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1669 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 23 ՀՈՒՆՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 166 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 27 նոյեմբերի 2023 թվականի թիվ 1669 որոշումը, 19.12.2023թ. տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-19122023-06-0045 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 27 նոյեմբերի 2023 թվականի «Վանաձոր քաղաքի, Մոսկովյան փողոցի թիվ 21/2-2 հասցեին կից ինքնակամ կառուցված կիսակառույցի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչելու, հողամասի նպատակային ու գործառնական նշանակությունը հաստատելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1669 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1. Որոշման վերնագիրը «հողամասի նպատակային ու գործառնական նշանակությունը հաստատելու և փոստային հասցե տրամադրելու մասին» բառերը փոխարինել «և փոստային հասցե տրամադրելու մասին» բառերով:

2. Որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ կետով.

«3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով: Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը համապատասխանում է Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծին և բավարարում է ՀՀ կառավարության 02.04.2015թ.-ի թիվ 412-Ն որոշման 1-ին կետի ը. ենթակետի դրույթներին և ենթակա է գրանցման որպես բնակավայրերի նպատակային նշանակության՝ գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման հողամաս»:

3.Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավար 23 հունվարի 2024 թվականի «Վանաձոր համայնքի ղեկավարի 27 նոյեմբերի 2023 թվականի թիվ 1669 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» թիվ 166 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2024 թվականի N 559

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 72 ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լևոն Տելեմակի Հարությունյանի 30.05.2023թ. թիվ 8741 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, Արսեն Իսահակյան Ռուդիկի ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 21.02.2024թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-21/24 ա եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 02.06.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 202387FLHG), 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ որոշում եմ.

1.Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաք Երևանյան խճուղի թիվ 72 շենքի բակում գտնվող ինքնակամ կառուցված,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 46.31քմ (ներքին՝ 38.06քմ) մակերեսով ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 40.92քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ

հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ:

5.Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 72 շենքի բակում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք.,Երևանյան խճուղի, 72/29 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2024 թվականի N 560

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 12-1/11 ՀԱՍՑԵԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սերինե Գեորգիի Մկրտումյանի դիմումը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 01.02.2024թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-40/24 Ի եզրակացությունը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 07.04.2023թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023WMEESA), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 2021թ. ապրիլի 15-ի թիվ 600-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 12-1/11 հասցեի հարավային մասում ինքնակամ կառուցված 173.84քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 153.1քմ, որից 12.5քմ մակերեսով խանութ, 140.6քմ ընդհանուր մակերեսով մարզասրահ) շինության օգտագործման նպատակը հասարակական շինություններից որպես արտադրական պահեստի:

2.Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 12-1/11 հասցեի հարավային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 173.84քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 153.1 քմ) շինությունների և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար

անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 254.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

3.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված արտադրական գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված շինությունների և դրանցով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինությունների ինքնակամ կառուցումը իրականացրած անձին շինություններն և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6.Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 12-1/11 հասցեի հարավային մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, ք. Վանաձոր, Վարդանանց փողոց, 12/2 պահեստ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 27
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2024 թվականի N 561

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ 2-ՐԴ ԱՎԱՆ, ԹԻՎ 152 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԻՆԱ ԼԵՎՈՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալինա Լևոնի Մանուկյանի (ծնված՝ 26.03.1965թ.) դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 27.06.2023թ. տրված թիվ 3585 (նոտարական ակտի կոդ: 594-20230627-66-7053306) հայտարարությունը, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, 23.10.2023թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-366/23 Ի եզրակացությունը, 05.12.2023թ. ՀՀ կադաստրի կոմիտեի տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023RM6HRP), «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան, թիվ 152 (պայմանական) հասցեում կառուցված բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 192.44քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1990-2015թթ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 192.44քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1990թ.-ից:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Ալինա Լևոնի Մանուկյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան, թիվ 152 (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 192.44քմ մակերեսով հողամասի և դրա վրա

գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ. բացառությամբ 2015թ. կառուցված 6.66քմ մակերեսով անասնաշենքի :

2.Փոխել Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավան, թիվ 152 (պայմանական) հասցեում գտնվող 0.019244հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Բուլղարական ավան 2-րդ թաղամաս, թիվ 152 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 27
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2024 թվականի N 562

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԱԶՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 37 ՇԵՆՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽԱՆՈՒԹԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԽԱՆՈՒԹՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարինե Նորիկի Փահլևանյանի դիմումը, 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 02.02.2024թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-48/24 Ի եզրակացությունը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 06.06.2023թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023XZJS4L), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 37 շենքի արևելյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 13.8քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 10.0քմ) խանութի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 13.8քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված հասարակական գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված

խանութի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին շինությունն և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6. Վանաձոր քաղաքի Լազյան փողոց թիվ 37 շենքի արևելյան մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, ք. Վանաձոր, Ս. Լազյան փողոց, 37/3 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 27
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2024 թվականի N 563

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1589 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 23.02.2024 թվականի ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԴ/0316/01/23 քրեական վարույթով մեղադրյալ Արեն Արայի Անանյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց պաշտոնավարման կասեցումը և բացակայելու արգելքը վերացնելու, փոխելու կամ դրա ժամկետը երկարաձգելու հարցը, 26.02.2024 թվականի թիվ 01/4002 դիմումը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով ***որոշում եմ՝***

1.Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 07 նոյեմբերի 2023 թվականի թիվ 1589 որոշումը:

2.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնին վճարել աշխատավարձի և պարգևավճարի չվճարված մասը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

28 փետրվարի 2024 թվականի N 564

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 32 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թինա Ասատուրի Ասատրյանի 03.05.2023թ. թիվ 7163 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը , հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, Արսեն Իսահակյան Ռուդիկի ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 21.02.2024թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-20/24 ա եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 23.05.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023ZNMKGS), 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաք Ղուկասյան փողոց թիվ 32 բնակելի տան հարևանությամբ գտնվող ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 33.94քմ (ներքին՝ 31.4քմ) մակերեսով մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 29.38քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու

մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին մետաղական ավտոտնակը և հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ղուկասյան փողոց թիվ 32 բնակելի տան հարևանությամբ գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք.,Ղ. Ղուկասյան փողոց, 32/2 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2024 թվականի N 565

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ Յ6/3-25 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտակ Ժորայի Նահապետյանի 14.06.2023 թվականի թիվ 9662 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19112012-06-0258 վկայականը, 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, Արտակ Ժորայի Նահապետյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02042013-06-0256 վկայականը, Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 18.03.2013 թվականի թիվ 251-Ա որոշումը, 25.03.2013 թվականի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին (մրցույթով) թիվ 66 պայմանագիրը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 481-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, 16.03.2012 թվականի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 66 պայմանագրի 9.2 կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց Յ6/3-25 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող համայնքային սեփականություն հանդիսացող 21.0քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի սեփականության իրավունքների պետական գրանցման թիվ 19112012-06-0258 վկայականի, նախապատվության իրավունքով, 10 տարի ժամկետով, կառուցապատման իրավունքով տրամադրել Արտակ Ժորայի Նահապետյանին՝ ավտոտնակ կառուցելու նպատակով:
2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Արտակ Ժորայի Նահապետյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 21.0քմ հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր, 21.0քմ ընդհանուր մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 630 (վեց հարյուր երեսուն) ՀՀ դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:
3. Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց Յ6/3-25 հասցեում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Մոսկովյան փողոց 1/11 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2024 թվականի N 566

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 66/1-25 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԼԱՐԻՍԱ ԱՎԵՏԻՔԻ ԲԱԲԻՆՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լարիսա Ավետիքի Բաբինյանի 09.08.2023 թվականի թիվ 13494 դիմումը, 29.11.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 1917176 վկայականը, Լարիսա Ավետիքի Բաբինյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21032012-06-0049 վկայականը, Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 02.03.2012 թվականի թիվ 186-Ա որոշումը, 16.03.2012 թվականի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին (մրցույթով) թիվ 63 պայմանագիրը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48¹-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, 16.03.2012 թվականի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 63 պայմանագրի 9.2 կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 66/1-25 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող համայնքային սեփականություն հանդիսացող 24.0քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման թիվ 1917176 վկայականի, նախապատվության իրավունքով, 10 տարի ժամկետով, կառուցապատման իրավունքով տրամադրել Լարիսա Ավետիքի Բաբինյանին՝ ավտոտնակ կառուցելու նպատակով:

2.Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Լարիսա Ավետիքի Բաբինյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 24.0քմ հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր, 24.0քմ ընդհանուր մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 375 (երեք հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

3.Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 66/1-25 հասցեում գտնվող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Երևանյան խճուղի, 66/25 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

28 փետրվարի 2024 թվականի N 567

### ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 12-15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍԵՐԻՆԵ ԳԵՈՐԳԻԻ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սերինե Գեորգիի Մկրտումյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21022020-06-0024 վկայականը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, մասնագիտական եզրակացությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 01.02.2024թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-40/24 Ի եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 07.04.2023թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023AL3GAL), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 2021թ. ապրիլի 15-ի թիվ 600-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 11-րդ, 17-րդ կետերով և 18-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 12-15 հասցեում գտնվող, Սերինե Գեորգիի Մկրտումյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված 3.9քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 3.3քմ) շինության օգտագործման նպատակը հասարակական մարզասրահից որպես արտադրական պահեստի:

2. Ճանաչել օրինական Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 12-15 հասցեում գտնվող, Սերինե Գեորգիի Մկրտումյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և

հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 3.9քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 3.3քմ) պահեստը՝ համաձայն հատակագծի:

3.Սերինե Գեորգիի Մկրտումյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 3.9քմ արտաքին մակերեսով շինության համար 11520 (տասնմեկ հազար հինգ հարյուր քսան) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

4.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Վարդանանց փողոց, 12/4 պահեստ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2024 թվականի N 568

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 12/1 ՀԱՍՑԵԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սվետլանա Արզումանի Վարդերեսյանի 23.08.2023թ. թիվ 02/14421 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը (138211), հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՐՇԱԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 21.12.2023թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-113/23 Ի եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 27.11.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023YRSDA5), ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Վերածննդի փողոց թիվ 12/1 հասցեի արևելյան մասում ինքնակամ կառուցված,ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 25.28քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 23.02քմ, որից 2.88քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝2.1քմ) նկուղային հարկ, 22.4քմ արտաքին մակերեսով(ներքին մակերեսը՝ 20.92քմ) 1-ին հարկ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 22.4 քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2.Փոխել Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Վերածննդի փողոց թիվ 12/1 հասցեի արևելյան մասում մասում գտնվող 0.00224հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

3.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6.Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Վերածննդի փողոց թիվ 12/1 հասցեի արևելյան մասում մասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Վերածննդի փողոց, 12/3 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2024 թվականի N 569

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ԱԾԽԱՀԱՏՆԵՐԻ ԹԱՂԱՄԱՍ 25/17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱԼԵՔՍԻ ԱԼԲԵՐՏԻ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալեքսի Ալբերտի Զաքարյանի 29.08.2022թ. թիվ 02/10201 դիմումը, 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 33 որոշումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10012024-06-0017 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնքի, Վանաձոր քաղաքի Տարոն-4 Ածխահատների թաղամաս 25/17 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 103.14քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 85.83, որից 37.23քմ՝ ավտոտնակ 1-ին հարկ, 48.60քմ՝ ավտոտնակ 2-րդ հարկ) ավտոտնակը 203090 (երկու հարյուր երեք հազար իննսուն) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 54.4քմ մակերեսով հողամասը 241640 (երկու հարյուր քառասունմեկ հազար վեց հարյուր քառասուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Ալեքսի Ալբերտի Զաքարյանին:

2.Վանաձոր համայնքի ղեկավարին՝ Ալեքսի Ալբերտի Զաքարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա.ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2024 թվականի N 570

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԳՈՐԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲԻ»-Ն ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ԳՈՐԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲԻ» 2024 թվականի փետրվարի 22-ի թիվ 01/3839 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ ***որոշում եմ.***

1.Բավարարել Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Դեմիրճյան փող. թիվ 26-5/2 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «ԳՈՐԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲԻ» հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Դեմիրճյան փող. թիվ 26-5/2 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2.Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3.Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 28
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2024 թվականի N 571

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՇՈՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՎՐՈՒՅՐԻ»-Ն ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ԱՇՈՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՎՐՈՒՅՐԻ» 2024 թվականի փետրվարի 22-ի թիվ 01/3841 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ ***որոշում եմ.***

1.Բավարարել Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Համբարձումյան փող. թիվ 9ա հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «ԱՇՈՏ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՎՐՈՒՅՐԻ» հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Տիգրան Մեծի պող. թիվ 32 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:

2.Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:

3.Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2024 թվականի N 572

## «ԷԿՈՆՈՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԷԿՈՆՈՄ» ՍՊԸ-ի տնօրեն Հարություն Նավասարդյանի 2024 թվականի փետրվարի 22-ի թիվ 01/3844 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ որոշում եմ.

1.Բավարարել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Կ.Դեմիրճյան թիվ 32 հասցեում գործող «ԷԿՈՆՈՄ» ՍՊԸ-ի տնօրեն Հարություն Նավասարդյանի հայտը՝ ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Կ.Դեմիրճյան թիվ 32 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2.Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3.Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների hհաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2024 թվականի N 573

### «ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ -ի վարչության նախագահի Միեր Աբրահամյանի կողմից լիազորված Գոռ Չիլոյանի 2024 թվականի փետրվարի 22-ի թիվ 01/3842 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ ***որոշում եմ.***

1.Բավարարել Երևան քաղաքի Վարդանանց փող. թիվ 13 հասցեում գործող «ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ -ի վարչության նախագահի Միեր Աբրահամյանի կողմից լիազորված Գոռ Չիլոյանի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Տիգրան Մեծի պող. թիվ 73/1-2 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2.Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3.Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 28
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2024 թվականի N 574

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՍՅՈՒԶԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆԻ»-Ն ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ՍՅՈՒԶԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆԻ» 2024 թվականի փետրվարի 22-ի թիվ 01/3838 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ ***որոշում եմ.***

1.Բավարարել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պող. թիվ 42 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «ՍՅՈՒԶԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆԻ» հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Տիգրան Մեծի պող. թիվ 42 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2.Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3.Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ      Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2024 թվականի N 575

### «ՊՅՈՏՐ ՖՈՏՈ ԷՔՍՊՐԵՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՊՅՈՏՐ ՖՈՏՈ ԷՔՍՊՐԵՍ» ՍՊԸ-ի տնօրեն Կարո Դոլմաջյանի 2024 թվականի փետրվարի 22-ի թիվ 01/3835 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ ***որոշում եմ.***

1.Բավարարել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Գ.Նժդեհի փող. թիվ 1/23 հասցեում գործող «ՊՅՈՏՐ ՖՈՏՈ ԷՔՍՊՐԵՍ» ՍՊԸ-ի տնօրեն Կարո Դոլմաջյանի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Մ.Մկրտչյան փող. թիվ 8 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:

2.Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:

3.Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 փետրվարի 2024 թվականի N 576

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 22 ՀՈՒՆՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 129 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 22 հունվարի 2024 թվականի թիվ 129 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 22 հունվարի 2024 թվականի «Վանաձոր համայնքի ղեկավարի 16 օգոստոսի 2021 թվականի թիվ 1721 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 129 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1.Որոշման 2-րդ կետում «կառուցապատման գոտում» բառերից հետո լրացնել «և Վանաձոր համայնքի ղեկավարի 16.08.2021 թվականի թիվ 1721 որոշման մեջ գրվել է սխալմամբ» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

28 փետրվարի 2024 թվականի N 577

### ԳՈՌ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆԻ և ՍՄԲԱՏ ՄԱԼՈՒՄՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի զեկուցագրի և արձանագրության հիման վրա 2024 թվականի հունվարի 26-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի հիմքով Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 26.01.2024 թվականին տրվել է զեկուցագիր և արձանագրություն առ այն, որ Վանաձոր քաղաքի Զաքարյան 14 հասցեի հյուսիսային մասում ինքնակամ կառուցվել է ավտոտնակի սեփականատեր Գոռ Ղարագյոզյանի կողմից (հասցե՝ Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, Զաքարյան փողոց, 14 շենք, 23 բնակարան) և ինքնակամ կառուցվել է գոտնափոր մառանի սեփականատեր Սմբատ Մալումյանի կողմից (հասցե՝ Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, Զաքարյան փողոց, 14 շենք, 33 բնակարան) փաստով:

2024 թվականի հունվարի 26-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2024 թվականի փետրվարի 5-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և ներկայացել են Գոռ Ղարագյոզյանը և Սմբատ Մալումյանը:

Գոռ Ղարագյոզյանը 29 փետրվարի 2023 թվականին Վանաձորի համայնքապետարան դիմում է ներկայացրել ( մտից թիվ 02/5033 ) Զաքարյան փողոցի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված մետաղական ավտոտնակի օրինականացման համար և Սմբատ Մալումյանը 11 ապրիլի 2024 թվականին դիմում է ներկայացրել ( մտից թիվ 02/5027 ) Զաքարյան փողոցի

հյուսիսային մասում ինքնակամ կառուցված գետնափոր մառանի օրինականացման նպատակով:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Գոռ Ղարագյոզյանի ինքնակամ կառուցած ավտոտնակի չափագրությունը կատարվել է 13 ապրիլի 2023 թվականին « Ինեքս » ՍՊԸ-ի կողմից իսկ Սմբատ Մալումյանի գետնափոր մառանի չափագրությունը կատարվել է 29 նոյեմբերի 2023 թվականին « Գասպար Վեքիլյան » ԱՁ-ի կողմից և պարզվել է,որ ավտոտնակի և մառանի զբաղեցրած հողամասերը համադրվում են:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն՝ գործի քննարկման համար էական համարվող հանգամանքներ պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր ձեռք բերել, որոնք սույն օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համապատասխան պարտավոր է ներկայացնել դիմողը, և վարչական մարմնի մնացած ժամկետում հնարավոր չէ ըստ էության որոշում ընդունել.

Նույն հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերականության, համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքում վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 օր ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության նպատակով՝ 26 հունվարի 2024 թվականին հարուցված վարչական վարույթի ժամկետը երկարաձգել մինչև 7 մարտի 2024 թվականը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 28
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 փետրվարի 2024 թվականի N 578

### «Վ.ԴԱՆԻԵԼՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԹԻՎ 5Ա ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂՈՒՄ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով մրցութային հանձնաժողովի 27.02.2024թ. թիվ Հ-5Ա-3/1-/27-02-24 արձանագրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և ՀՀ կառավարության 03.12.2020թ. թիվ 1994 որոշմամբ հաստատված կարգի 78-րդ և 80-րդ կետերով՝ ***որոշում եմ.***

Թույլատրել «Վ.Դանիելյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը թիվ 5Ա միկրոավտոբուսային երթուղին համալրելու GAZ 322132 մակնիշի 37 AJ 015 պետհամարանիշի միկրոավտոբուսով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 29
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 փետրվարի 2024 թվականի N 579

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2, ՔՇՀ-3 ԹԻՎ 93 ՇԵՆՔԻ ԹԻՎ 3 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԳԵՎՈՐԳ ԿԱՄՈՅԻ ՎԱՆԵՍՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՅԿ ԿԱՄՈՅԻ ՎԱՆԵՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գևորգ Կամոյի Վանեսյանի (1983թ.) դիմումը, ղեկավարվելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 1997թ. մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ, Վանաձոր համայնքի ավագանու 2001թ. մարտի 23-ի թիվ 21 և 2005թ. օգոստոսի 26-ի թիվ 212 որոշումներով՝ որոշում եմ.

1.Հանձնարարել Քաջիկ Թադևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ Փ., 37Շ. 28ԲՆ.) դիմելու ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-3 թիվ 93 շենքի թիվ 3 չորս սենյականոց բնակարանի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

2.Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-3 թիվ 93 շենքի թիվ 3 չորս սենյականոց բնակարանը 47 500 դրամով ուղղակի վաճառքի ձևով որպես սեփականություն՝ օտարել նշված բնակարանի վարձակալներ՝ Գևորգ Կամոյի Վանեսյանին և Հայկ Կամոյի Վանեսյանին:

3.Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-3 թիվ 93 շենքի կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի համապատասխան չափաբաժնի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է անհատույց փոխանցման շենքի թիվ 3 բնակարանի վարձակալներ՝ Գևորգ Կամոյի Վանեսյանին և Հայկ Կամոյի Վանեսյանին:

4.Քաջիկ Թադևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ Փ., 37Շ. 28ԲՆ.) Գևորգ Կամոյի Վանեսյանի և Հայկ Կամոյի Վանեսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել բնակարանի առուվաճառքի և հողամասի անհատույց փոխանցման պայմանագիր՝ որպես նրանց ընդհանուր բաժնային սեփականություն՝ հավասար բաժիններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ      Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 29
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 փետրվարի 2024 թվականի N 580

### ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 83-Ա որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 495 որոշմամբ ստեղծված դրամական և նյութական օգնություն տրամադրելու համար Վանաձորի համայնքապետարան դիմած քաղաքացիների դիմումների քննարկման հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 27-ի թիվ 2 արձանագրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր համայնքի 2024 թվականի բյուջեի ծախսերի գործառնական դասակարգման 10-րդ բաժնի 7-րդ խմբի 1 դասով նախատեսված միջոցներից աջակցության նպատակով 64 /վաթսունչորս/ քաղաքացու հատկացնել 2,240.000 (երկու միլիոն երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնին՝ մեկամսյա ժամկետում կատարել գումարի վճարում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. փետրվարի 29
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 մարտի 2024 թվականի N 581

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍԻ ՕՀԱՆՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի զեկուցագրի արձանագրության հիման վրա 2024 թվականի հունվարի 29 -ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի հիմքով Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժնի 29.01.2024թ.զեկուցագրի և արձանագրության առ այն, որ Վանաձոր քաղաքի Խնձորուտ 1-ին փողոց,1-ին փակ., թիվ 9 հասցեի բնակիչ, 1965թ.ծնված Արմենակ Սարգսի Օհանյանը Տիգրան-Մեծ պողոտա 63 շենքի հարակից տարածքում առանց թույլտվության իրականացնում է բացօթյա առևտուր:

Հարուցված վարչական վարույթի հիման վրա հրավիրվել են վարչական վարույթի լսումներ սույն թվականի հունվարի 19-ին, ժամը 11:00-ին, որին մասնակցելու նպատակով ծանուցվել է Սարգիս Օհանյանը, սակայն ծանուցման ստացման վերադարձի կտրոնը մինչև օրս չի ստացվել:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական

վարույթը, եթե՝ վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Սարգսի Օհանյանի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

4. Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով համայնքի ղեկավարին և դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 01
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 մարտի 2024 թվականի N 582

## «ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓ ՄԵՆԹՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի զեկուցագրի և արձանագրության հիման վրա 2024 թվականի հունվարի 29 -ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի հիմքով Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի 25.01.2024թ.զեկուցագրի և արձանագրության առ այն, որ Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտա 60 հասցեում գտնվող շինանյութի առևտրի կենտրոնը, շահագործվում է առանց համապատասխան ավարտական փաստաթղթերի:

Հարուցված վարչական վարույթի հիման վրա հրավիրվել են վարչական վարույթի լսումներ սույն թվականի փետրվարի 9-ին, ժամը 10:00-ին, որին մասնակցելու նպատակով ծանուցվել է «ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓ ՄԵՆԹՍ» ՍՊԸ-ի տնօրեն Արմեն Մուրադյանը, այնուհետև տնօրենի կողմից լիազորված անձ Արշակ Հովսեփյանը սակայն վարույթին չեն ներկայացել և չի ստացվել ծանուցագրի վերադարձի կտրոնները:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական

վարույթը, եթե՝ վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «ԿԱՄ ԴԵՎԵԼՈՓ ՄԵՆԹՍ» սահմանափակ պատասխանատվության ընկերության վերաբերյալ վարչական վարույթը կասեցնել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

4. Որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով համայնքի ղեկավարին և դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 01
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 մարտի 2024 թվականի N 583

## ԱՐԹՈՒՐ ՌՈՒԲԵՆԻ ՄԱՐԻԿՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԹՈՒՐ ՌԱՖԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Վարչական ակտի նկարագրական մաս.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 07.02.2024թ. տրված արձանագրության և զեկուցագրի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Արթուր Ռուբենի Մարիկյանի ( հասցե՝ քաղ.Վամնաձոր,Կ.Դեմիրճյանփողոց, 13 Ա շենք, 5 բնակարան ) և Արթուր Ռաֆիկի Վարդանյանի ( հասցե՝ քաղ.Վամնաձոր,Ուսանողական փողոց, 5 շենք, 59 բնակարան ) կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 07.02.2024թ. տրված արձանագրության, զեկուցագրի և ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 25.01.2024թ. թիվ 19.10/2396-24-23/01/2024 գրության համաձայն՝ 1977թ. ծնված՝ Արթուր Ռուբենի Մարիկյանը (նույնականացման քարտ՝ 010643112, տրված՝ 22.01.2019թ., «018»-ի կողմից, հասցե՝ ք. Վանաձոր,Կ.Դեմիրճյան փողոց 13շենք, բն.5) և 1978թ. ծնված՝ Արթուր Ռաֆիկի Վարդանյանիը (նույնականացման քարտ՝ 006430292, տրված՝ 14.04.2017թ., «018»-ի կողմիցհասցե՝ ք. Վանաձոր, Ուսանողական փողոց 5 շենք, 59 բնակ.) Վանաձոր քաղաքի Նժդեհի փողոցի 55-1 կաթսայատան հասցեում, վերջիններիս սեփական հողամասում ինքնակամ կատարված շինարարական աշխատանքների փաստի՝ կաթսայատան օբյեկտի երկրորդ հարկի վրա ինքնակամ կառուցել են շինություն, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք է:

2024 թվականի փետրվարի 2-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2024 թվականի փետրվարի 16-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին քաղաքացիներ՝ Արթուր Մարիկյանը և Արթուր Վարդանյանը պատշաճ ծանուցվել և ներկայացել են վարչական վարույթի լսումներին: 16.02.2024թ. կազմված արձանագրության համաձայն վերջիններս հայտնեցին, որ վերընշված կաթսայատունը հանդիսանում է իրենց համատեղ սեփականությունը և իրենց կողմից կաթսայատան երկրորդ հարկում ապօրինի ավելացրել են կիսակառույց և այն օրինականացնելու համար 2024 թվականի հունվար ամսին դիմել են Վանաձորի համայնքապետարան:

2. Վարչական ակտի պատճառաբանական մաս.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հողօգտագործման իրավունք չունեցող անձանց կողմից պետությանը և համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 219¹-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

3. Վարչական ակտի եզրափակիչ մաս.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 154-րդ հոդվածի 1-ին մասով, 219¹-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 53-րդ, 58–60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արթուր Ռուբենի Մարիկյանին և Արթուր Ռաֆիկի Վարդանյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 700.000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2.Պարտավորեցնել Արթուր Ռուբենի Մարիկյանին և Արթուր Ռաֆիկի Վարդանյանին տուգանքի գումարը վճարել 900235401537 հաշվեհամարին:

3. Կասեցնել Վանաձոր քաղաքի Գ.Նժդեհի փողոցի 55-1 հասցեում իրականացվող ինքնակամ շինարարությունը, առաջարկել Արթուր Ռուբենի Մարիկյանին և Արթուր Ռաֆիկի Վարդանյանին մեկշաբաթյա ժամկետում դիմել համայնքի ղեկավարին՝ այն օրինականացման համար:

4.Որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից կարող է բողոքարկվել վարչական կարգով Վանաձոր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2024թ. մարտի 01
ք.Վանաձոր